

չատ խելացի և լեզուագէտ օրի-
օրդ մըն է, բայց յոյս կայ որ
ազատի :

Մեր յեղափոխականներու մի-
ջեւ փոխադարձ համակրութիւն
սկսեալ է : Լրագիրները սկսած
են գեղեցիկ քայլեր տունել հա-
մերաշխութեան մը գալու համար :
Եթէ այս ուղղութեամբ շարու-
նակուի . և անկեղծօրէն գործնա-
կան քայլեր առնուի , միութեան
առաջին օրինակ տուողները ա-
մերիկացի հայ յեղափոխական-
ները պիտի ըլլան : Միութեան
ամենակենսական և առաջին պայ-
մանը փոխադարձ վստահութիւնն
է , եթէ այդ ըլլայ այն ժամանակ
գործը շատ կը գիւրիւննայ :

ԻՊՏԵՍԱ

ՎԵՆԵՏԻԿ Ս . ՂԱԶԱՐ ()

«Եւրոպայի Հայ Ուսանողական
միութիւն»ը լի յարգանքով դէպի
Միութեաններէ երկհարիւր
տարւայ գործունէութիւնը միաց-
նում է իր անկեղծ ձայնը յորձե-
տանական շնորհաւորութիւննե-
րին : Շարունակեցէք եռանդով
և հաւատացէք, որ առաջիկայ
մօտիկ տօնախմբութիւնը կը
զուգարգիւ սոյն ժողովրդի աչա-
տութեան տօնին, որին դուք ծա-
ռայեցիք երկու դար , սկսած
անմոռանալի Միութարից :

Թող յարատեւ լինի Գրչի ու
մտքի վերածնող գործունէու-
թիւնը :

ԼԻԱԶՈՐ ԿՕՄԻՏԷ

(*) Եւրոպական Հայ Ուսանողական
Միութեան լիագոր կօմիտէն հետեւ-
եալ հեռագիրն է ուղարկել Վենե-
տիկի Միութեաններին երկդարեան
յորթեանի առթիւ :

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՆՎԱՍԿԱՆԱԼԻՆ

IV

Եղօի հեռանալուց յետոյ , ես իս-
կոյն առանձնացայ ինձ յատկացրված
սենեակում :

Ուզելի քնել , բայց անկարելի է-
ղաւ . մտածութեան առարկան Վահէն
էր , անհասկանալի Վահէն , որը հի-
մայ տաժանակիր աշխատանքից փախ-
չելով վայրենի գազանի պէս ապրում
էր անտառներում :

Սիրերը , շղթաները տաժանակիր
աշխատանքը չէին կարողացել ընկ-
նել Վահէին , ինչպէս մանուկ հասա-
կում ընկնել չը կարողացաւ նրան
ուսումնարանը :

Եղօն ասաց որ Վահէն փախչում է
իր ծանօթներից . արդեօք պատճառն
ի՞նչ էր այդ փախուստի . իր վիճակից
ամաչելը , միթէ ուրիշ պատճառ :
Արդեօք վախը . բայց նա վախկոտ չէ :

Սկսեցի ախտաւ , որ Եղօից չը
խնդրեցի մի օր դար և ինձ տանէր

ՆԱՄԱԿՆԵՐ ԿՈՎԿԱՍԻՑ

VI

Հինգերորդ նամակումս պարզել էի
որ մեր մտաւոր կեանքի սնանկու-
թեան պատճառը կուսակցականու-
թիւնը չէ , այլ հրապարակի վրա
ներկայ պահանջներին չը համապատաս-
խանող մարդկանց բացակայութիւնը :
Իսկապէս ի՞նչ են կովկասահայ ներ-
կայ պահանջները :

Որուս կառավարութիւնը բացար-
ձակապէս ուզում է մեզ ուսուցնել ,
մեր ազգային ինքնուրոյն կեանքի
բոլոր գործօնները ամենայն կոպտու-
թեամբ մեռցնելով :

Կովկասահայ ներկայ կեանքը պա-
հանջում է այդ ուսուսական ոտնձգու-
թիւնների դէմ զօրեղ դիմադրական
ուժ ստեղծել , կարելի եղածին շափ
օրինաւոր միջոցներով , իսկ հակառակ
պարագային և գաղտնի : Սովկայն
ներկայումս այդ Դիմադրական ուժ
ստեղծողները գրեթէ գոյութիւն չու-
նին , ամէնքն էլ հաշտված են դառն
կրողութեան հետ և չեն մի ճիգ չեն
թափում :

Դադարաբան մարդիկ , բառի
լայն մտքով , հիմա կովկասում չէք կա-
րող գտնել հները ջախջախված և յու-
ստհատված են , կամ թէ նոր բուր-
ժուական դասակարգի շարքերի մէջ
պարագլուխների դերը ստանձնելու
պատրաստութեան մէջ են , իսկ
նոր կրթւած սերունդը հին ընկած
գաղափարականների ներկայ վիճակը
տեսնելով , այլ եւս սեւերոգ է համար-
ում նրանց փորձերը կրկնել գաղա-
փարականի դիմակով անցել բուրժա-
ների շարքի մէջ , այլ ուղղակի , հա-
մալարանից դուրս գալուն պէս ,
ափալ թափալ վազում է այնտեղ ուր
մեծաքանակ ոսկին է փայլում , ուր
կարելի է անանական ամէն պահանջ-
ներին բաւականութիւն տուլ կեան-
քը վայելել : Կիսադիմադրական դի-
մադուր յարձակումները այդ նոր
սերնդի դէմ ոչ մի բարեբար ազգեցու-
թիւն չեն գործում , որովհետեւ դրան-
քան չեն գործում , որովհետեւ դրան-

իրենց թագաւորը : Բայց եղածը ե-
ղած էր . պէտք էր կրկին յոյսը դիպ-
ւածի վրայ դնել , մի կերպ Վահէին
հանդիպելու համար :

Եղօին շանդիպելուց մի շաբաթ ան-
ցած շանցած՝ անցայ Մուշտէից այգին
դրօններու : Այգին լիքն էր զրօնող-
ներով . անկողնից տեղ չը կար ,
քայլել անկարելի էր , դրա համար ա-
ւելի լաւ համարեցի անցնել դէպի
Քուի ափը , իմ սիրած ծառի տակին
տեղաւորվել , դիտել զիժ , անհնա-
զանդ Քուի ալիքները և լսել երածը-
տութիւնը , որը հեռուից և առանձնու-
թեան մէջ աւելի հասնելի է :

Հազիւ տեղաւորվել էի իմ սիրած
ծառի տակին , երբ աչքս ընկաւ իմ
ձախ կողմում , մի յանի քայլ հեռու ,
տեղաւորված երեք հոգիների վրա .
դրանցից երկուսը արմուտների վրա
թիկն էին տեւել , իսկ երրորդը մէջտե-
ղում ծաղաւորակ նստել էր : Նրանք
կամայակ ծայրով խոտում էին . նրան-
ցից մէկը յանկարծ իմ կողմը նայեց .
նայողը Եղօն էր :

Ես ուրախացայ , մտածելով որ այդ
երեքից մէկը անպատճառ Վահէն է և
վերջապէս պէտք է կարողանում տես-
նել այդ հետաքրքիր մարդին :

ցից ամէն մէկը շատ գեղեցիկ կերպով
համոզված է թէ՛ լիբերալ հրապարա-
կախօսը մի հատ դեղին ոսկու համար
հարիւր անգամ գլուխ կորնձի կը տայ :
Եւ նրա գրածները լոկ գրելու ու-
նակութեանը բաւականութիւն տալու
համար են :

Սանդուկեանցի յորեւանի հանդէ-
սին մի շատ բնորոշ դէպք տեղի ու-
նեցաւ . Մանթաշեան և Սանդուկեան
«Պէպօն արտադրող» , համարվեցին ,
ի՞նչ էք կարծում դա կովկասահայ հին
լիբերալների և ներկայ բուրժուաների
իրար խառնման իրական տեսարանը
չէ՞ր :

Դա մեր լիբերալների թաղման հան-
դէսի ամենալէյք տեսարանն էր :

Այդ միեւնոյն տեսարանը տեղի է
ունենում ամէն օր , ամէն ժամ և ա-
մէն վայրեան փոքրիկ հին լիբերալ-
ների և փոքրիկ բուրժուաների միջև ,
աշխարհի ամէն ծայրում ուր ապրում
է կովկասահայ հին լիբերալ շուա-
վիլը , կամ հետեւողը :

(Շարունակելի)

ՄԵՐ ԳԱՂԹԱՎԱՅՐՆԵՐԸ

II

Անցեալ սնգամ խօսեցանք Ե-
գիպոսի մասին և նկատեցինք
թէ՛ Եգիպոսի հայութիւնը շատ
աննախանձ լի վիճակի մը մէջ կը
գտնուի . չը նայած որ ամենէն
հարուստ հայ գաղթականութիւնն
է :

Պուլկարիայ Հայ գաղթականու-
թիւնն ալ նախանձ լի վիճակ մը
չունի , չը նայած որ ժողովրդին
մէջ ճիգեր կը նկատուին դըպ-
րոցները բարեկարգելու , ժամա-
նակի պահանջներուն համեմատ
ուղղութիւն մը տալու համար ա-

Եղօն ինձ ճանաչեց , սակայն տէրը
չեղաւ և գլուխը իսկոյն ընկերների
կողմը դարձրեց :

Բայց ես տրամադիր չէի նրա օձիքը
բայ թողնել տեղիցս իսկոյն վեր
թուայ մտեցայ խմբակին և գիտեցի
եղօին :

Եղօ , դու խոտացար Վահէին
ինձ մօտ բերես , ի՞նչու չը բերի ,
այսօր քաղաք էք եկել :

Ներողութիւն պարտնս , ես շատ ու-
զեցի խոտաւումս կատարել , բայց Վա-
հէն չեկաւ . Վահէն թող ինքն ասի,
եթէ սուտ եմ ասում , այն ժամանակ
մեղադրեցիք ինձ :

Այդ ասելով Եղօն մատուցեց յոր-
ւակ մէջտեղը նստողին : Նա մի հսկայ
էր . նստած տեղում ինձնից շատ քիչ
ցած էր . երկար , սեւ թաք ու թուք
արծաթ թելերով մօրուքը արանոսէ
չըջանակի նման գրկել էր նրա ձեռքն .
նուրբ գէմքը . աչքերը սուր ու կրտ-
րուկ մի փաղ ունէին . որի առջեւ
շատ քիչ նայուածք կարող էր դիմանալ :

Ես մի վայրկեան զմայլվածի պէս
չըսրեցի այլ նուրբ առնական դէմքի
ստեղծ , յետոյ ինքզինքս հաւաքելով
հարցրի .

— Ինչո՞ւ չեկաք Վահէ
— Նրա համար որ ձեզ չեմ ճանա-
չում . ինչ գիտնամ թէ ո՞վ է ուզում
ինձ տեսնել . դուք մանկական ծանօ-
թի անուսով էք ինձ ձեզ մօտ կանչել
բայց շատ անգամ այնպիսի մանկական
ծանօթներ են լինում , որոնց մարդ
բոլորովին չի ուզում հանդիպել :

նոնց , որպէս զի այնպիսի հայ
սերունդ մը պատրաստուի որ
կարենայ դիմադրել ապագայ
փորձանքներուն և հայութիւնը
չը կարուի հոս : Սակայն ժողո-
վրդային այդ ճիգերը պարտաւոր-
աբար մը չեն տուած և յոյս ալ
չիկայ թէ տան : Դպրոցները ի-
րենց անկեալ վիճակէն բարձրա-
ցընել ուղղուեցին նիւթապէս շատ
քիչ օգտակար են մեր դպրոցնե-
րուն , որովհետեւ իրենք ալ
բան մը չունին : Իսկ նիւթապէս
ապահով գասակարգը գրեթէ ա-
մենեւին չի հետաքրքրուի դպ-
րոցներուն վիճակով :

Պուլկարիայ երեք գլխաւոր քա-
ղաքներու մէջ , ուր կարե-
ւոր հայ բաղմութիւն մը կը գըտ-
նուի , որուն մէջ կան բաւական
թուով հարուստ մարդիկ , դըպ-
րոցները բոլորովին անպահով
վիճակի մէջ են : Այդ քաղաք-
ները են՝ Ֆիլիպէ , Վստնա Ռուս-
չուք , Այդ քաղաքներու անուն-
ները մեծ են . հարուստ հայերը
այնտեղերը կապրին , սակայն ոչ
մէկ տեղ դպրոցները ապահով
են : Ուսուցիչները կատարեալ
մուրացիկներու դեր կը կատա-
տարեն իրենց ամսականները
ստանալու համար , տարին ան-
գամ մը կը փոխուին : Ուշ կը
բացուին , տարւոյն ընթացքին
մէջ կը գոցուին , և այդ ամէնը
տեղի կունենայ դպրոցներուն
նիւթապէս ապահով չըլլալուն
համար :

Ինչպէս ըսինք , դըպրոցներով
հետաքրքրուողներուն մեծա-
մասնութիւնը ժողովրդին անա-
պահով մասը կը կազմեն . ու-
նեւ որները , մեծ մասամբ երկուր
վաճառականներ , միշտ հեռու

— Շատ լաւ . անշուշտ յիշում էք
սրանից շատ շատ տարիներ առաջ ,
երբ դուք էլ դեռ աշակերտ էիք ,
ձեզնից մի աւելի փոքր աշակերտ ձեռ-
նը դարձի վրայ ընկել էր , չէր կարո-
ղանում սոքի կարգնել և դուք օգ-
նեցիք , բարձրացրիք , ես այն փոք-
րիկ աշակերտն եմ :

— Հա՛ , հա՛ , ինչպէս չեմ յիշում :
Բայց իսկապէս շատ ծիծաղելի էր . լաւ
միտս է : Դրանից յետոյ դու միշտ աշ-
խատում էիր այդ լաւութեան ասակից
դուրս գալ . բո նախաձեռնից ինձ բաժին
էիր ուզում հանել : Է՞յ դիտի օրեր ,
անցան գնացին . լաւ օրեր էին , էլ
ոչ մի գնով չենք կարող ետ բերել
այդ օրերը : Նստի , նստի . եթէ չես
քաջվում Սիրիի փախստականներից .
եթէ Եղօն այդ բոլորը պատմէիր ,
անպատճառ կը գայի քեզ մօտ :

— Չէ այստեղ չը նստենք . աւելի
լաւ է գնանք մի մասնաւոր այգի . մի
լաւ տեղ նստենք , մի քիչ բան ու-
տենք , մի քիչ էլ պիտի խմենք , եւ
խօսենք :

Այստեղ ազատ չենք լինի : Զրօս-
նողները շատ են . Պատասխանեցի :

— Շատ լաւ գնանք . ինչքան չը
լինի հայրենակիցներ ենք :

Զորոս էլ վեր կացանք և մութ ծա-
ռուկներով , որոյ մոլոր ճախարակով
դուրս եկանք Մուշտաից , մտանք
մտաւոյ մասնաւոր այգիներից մին և
տեղաւորվեցինք հաղորդ թ փերից
հիւսված մի հիւղիակի մէջ :

(Շարունակելի)

կը փախչին ազգային հիմնարկութիւններէն, պատճառաբանելով որ իրենք չեն կառավարեր, տեղացիները կուզեն զիրենք հարստահարել առանց իրենց ունեւնիքն առանց իրենց անհատականութեանը ազգային գործերու մէջ:

Սակայն, մեր կարծիքով այդ պատճառաբանութիւնը այնչափ ալ յարգի չէ: Տեղական հայ գաղութներու մէջ անխտիր կերպով կը սորվին ազգային հայ գաղութականներու և տեղացիներու գաւակները, կարելի է ըսել որ գաղութականները մեծամասնութիւնը կը կազմեն: Իսկ ազգային և հայ գաղութականութիւնը պէտքը զգացող մանուկները զրկել կը թուր լինէ լինելու ու ետական պատճառաբանութեամբ մը, կատարեալ յանցանք մըն է և քար սիրտ ունենալու արդիւնք:

Ազգային ուրիշ խնդիրներու մէջ Պուլկարիոյ հայ գաղութը չը նայած իր ազգատուութեանը, ամենէն բարձր տեղը կը գրաւէ. յեղափոխութեան, որբերու հայ ազգատնիկու համար Պուլկարիոյ մէջ ապրող հայերն ըրած զոհողութիւնը ոչ եզրագծաւ, ոչ անհատական և ոչ ալ Պարսկաստան ըրած են: Արտասահմանի ազգային կեանքին մէջ ալ յառաջադիմական ունեւնիքը պուլկարահայ գաղութը սկսած է: Պուլկարահայ միջոց էն համակիրը եղած է հայկական յեղափոխութեան և էն բացարձակ բողոքողը թուրք բռնութեան և վատ հայ պաշտօնեաներուն դէմ: Եւ Պուլկարիոյ հայ գաղութականութեան այդ առաւելութեան պատճառը մենք կը գտնենք պէյերու, փոշաներու, փարթամ մեծատուններու չըբողոքութեանը և յանդուգն մամուլի ներկայութեանը մէջ:

ահա նպատակը և արդիւնքը թուրք բռնութեան:

Այդ բռնութիւնը իր ամբողջ ուժերը լարելէ ամեն ազատական ձգտումու ամէն մի մարդկային կեանք ոչնչացնելու համար: Հարիւրաւոր զարգացած երիտասարդներ, դուրս խլված իրենց հարազատ երկրից, անհետանում են ասիական խաւար զնդունների մէջ:

Ուրիշ հարիւրաւոր հարիւրներ ընկած են բարբարոսի սրի բերանի տակ. արիւննուշտ թուրքի գաղանձութիւնները սահման չունեն:

Մարիցայի գաղտնիքը սկսած մինչև Պինդոսի բարձունքը, Շար լեռնից մինչև Սպիտակ ծովի փերը, մարտիրոսների այդ ամբողջ երկրի մէջ անգութ բռնութիւնը հետզհետէ աւելի անագթօրէն է որոտում:

Ստորկների երկրից օգնութեան են կանչում:

Այդ Գերի երկրի անունով, Մակեդոն-Օդրինեան Բարձրագոյն կոմիտէն ձեր օգնութիւնն է խնդրում, ամբողջ բուլղար ժողովրդի օգնութիւնը:

Յիշեցէք Բաթակը, Պանակիրիշտէն, Պէրուշչիցան, Բրօցիգօվան, յիշեցէք ձեր մօտիկ անցեալը, երբ դուք էլ հեծում էիք Օսմանցիների ծանր լծի տակ, եւ օգնեցէք ձեր եղբորը, որը սարսփելի տանջանքներում պատրաստում է իր ուժերը անպուժ բռնութեան դէմ յուսահատական կռիւր մղելու համար: Նախագահ Ստ. Միխայիլովի ֆոխնախագահ Իվան Սրոյչեվ Կանձապահ Գ. Բլաշկով

Խորհրդական անդամներ Ստ. Նիկոլօզով Ան. Բօզուկօզով

ՊՈՒՆՈՅ ՊԱՏՐԻԱՐԷ

Ֆրանս.— Թրքական ընդհարումի միջոցին՝ ամէն հայ մարմին աշխատեցաւ հանգամանքէն օգտուել և Ֆրանսայի կառավարութեան ուշադրութիւնը հրաւիրել Հայաստանի ծանր կացութեանը վրայ: Յեղափոխական մարմինները, իրենց ուղղութեանը և կոչմանը հակառակ երթալով, ծանուցագրեր ներկայացուցին թէ Ֆրանսայի և թէ Եւրոպական պետութիւններուն, իսկ Օրմանեան պատրիարքը լուռ մնաց: Եթէ Օրմանեան քչիկ մը հայրենասէր և արի մարդ ըլլար, ան ալ պարտաւոր էր այս յարմար պարագաներու մէջ կանոնաւոր սեղեկագիր մը պատրաստել Հայաստանի կացութեանը մասին և ներկայացնել Պուլկարի եւրոպական դեսպաններուն, որով, իբր պաշտօնական պետ տաճկանայ ժողովրդին՝ մեծ զօրովի պիտի եղած ըլլար միւս զինուորներու ազգեցելիներ աւելի զօրաւոր ընելու համար:

Սակայն Օրմանեան լուռ է. անոր գոյութիւնը անգամ չի նկատուիր հայկական այս ճգնաժամին մէջ: Օրմանեան միայն եկեղեցական գործերով զբաղած է. Օրմանեան ոչ միայն սեղեկագիր չի մատուցաներ և է դեսպանի մը, այլ բերանացի դիմումներ ալ չի ըններ:

Սուլթան գուցէ իր կեանքին մէջ Օրմանեանի չափ հրու և ստոր հայ պատրիարք մը տեսած չունի, և ո՞վ գիտէ որչափ դժէք է որ այսպիսի պարագաներու մէջ, երբ հայ ժողովուրդը գիմարեցելու սկզբունքը ըմբռնած է այլ ևս, երբ եւրոպական մեծ պետութեան մը հետ պատերազմելու վախն ու ալիստիւր կը տանջէ իր լիկած ուղեղը, իր գիմացն ունի ստրկապետ Օրմանեան մը, բայց ոչ իզմիրլեան կամ Ներսէս:

Օրմանեան բացի հայրենասէր չըլլալէ, և կատարեալ ապուշ մըն է: Ան ընդունակ չեղաւ ըմբռնելու թէ՛ ժամանակը հասած է առանց զոհողութեան մը իր կտորած վարկը հայ ժողովրդին մէջ բարձրացնելու: Իզմիրլեան երբ Սուլթանին դէմ կը մաքառէր, ոչ մէկ մեծ պետութիւն բացարձակ թշնամական յարաբերութիւններու մէջ կը գտնուէր թուրքի հետ: Այսօր Ֆրանսայի պէս պետութիւն մը թուրքի հետ իր յարաբերութիւնները խզած է, ու ստրուկ, ապուշ Օրմանեան չը կրցաւ այդ դեղեցիկ, բացարձակ առիթէն օգտուիլ:

Ինչէն կը վախնայ Օրմանեան, շատ շատ զինքն ալ երեսօղէմ կամ ուրիշ տեղ մը պիտի աքսորէին: Իսկ եթէ այդչափ ալ արիւթ չունի, այդչափ զոհողութեան ալ պատրաստ չէ, ուրիմն ինչպէս յանդգնեցաւ պատրիարքական պաշտօնը ընդունիլ ու ինչպէս կը յանդգնի շարունակել այդ պատասխանատու պաշտօնին մէջ մնալ:

Ապուշը ժամանակ մը հրաժարականներ կը մատուցանէր Սուլթանի, որովհետեւ հայերու վիճակը չէր բարեօքեր. հիմա հայերու վիճակը աւելի տաքնապալի է, հրաժարականի և պահանջումներու աւելի տեղեկացուց կայ, ինչպէս չի գործեր:

Օրմանեան մեծ գործով զբաղած է հիմա. իր ստրկին վրա բուսած պաշտօնը. Աստուած տայ այդ պաշտօնը այնքան մեծնայ Հայաստանի կրթիւն վրայ բուսած պաշտօնը ալ աւելի մեծնայ և յատկեցնէ այդ ապիկար մարդը:

Պուլկարի մէջ անցեալ շաբթուան ձերբակալեցին երեք հարիւրի չափ կրթուած պուլկարներ, որոնց մէջ կը գտնուէին նաև Ռօպէրթ Գոլթօնը քրօֆէսօրը Գանաթիրօզ, պուլկար սէմէնարիային տեսուչ կրատինարօզ, բրօֆէսօր Թօթէզ և ուրիշ շատերը: Պուլկարիայէն Պուլկարի պուլկարները կը ձերբակալուին և ոստիկանատուն կառաջնորդուին:

Անցեալ շաբթուան, պուլկարական «Պօրխ» նաւը Պուլկար հասնելուն պէս հոն գտնուած ամէն պուլկարահայտակները բանտարկեցին: Պուլկարի կը բողոքէ այդ բռնաբարութիւններէն, սակայն Բ. Գուրը կարեւորութիւն չի տար, իր գոմիսերը Սօֆիանէն ետ կը կանչէ ու անվրդով կերպով կը շտրունակէ պուլկարները հալածել: Պուլկար գործակապարհին արձակուրդի գացած ըլլալուն պատճառով Պուլկարիոյ յարաբերութիւնները տեսակ մը խղճած են թուրքիոյ հետ: Սեյանթի նահանգին մէջ ալ պուլկարները մեծ հալածանքի են թարկուած են: Մեծ խմբերով ուսուցչներ և քահանաներ կը լեցունեն «Էտի կուլէ» բանտը, որ քիչ ժամանակ մը դատարկուած էր. բանտարկեալները Փոքր Ասիա աքսորուելուն պատճառաւ, Հիմայ այդ սարսփելի բանտը պուլկարներով լեցունէ, որոնք պարտաւոր են սպասել թրքական արդարադատութեան:

Ամբողջ նահանգին մէջ «կոմիթա» կը փնտնեն և շատ մը տեղեր զէնք և «տիւնմիթ» կը գտնեն...

ԲԱՆԱՍԵՐ ԱՍՍԱԹԵՐԹ ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ԿԻՏԱԿԱՆ

«Բանասէր» յարգելով ժողովրդական և գրական անձանց գիմումները, կը խոստանայ յառաջիկայ տարի շրջանէն (1902 Յունուար) սկսեալ հետեւեալ նոր ծրագրով հրատարակուիլ:

Ա. «Բանասէր» նախ պիտի հրատարակէ ազգային յառաջիկա մութեան վերաբերեալ խմբագրական տեսութիւններ:

Բ. Բանասիրական յօդուածներ՝ ազգային պատմութեան և մատենագրութեան վերաբերեալ:

Գ. Օտարալիցի նշանաւոր հանձարներու գրուածոց թարգմանութիւններ:

Դ. Հայ աշխարհագրական և ազգագրական յօդուածներ:

Ե. Նոր հրատարակուած գրքերու վրայ քննադատական տեղեկութիւններ:

Զ. Լեզուաբանական և սոսո. գաբանական յօդուածներ:

Է. Ազգային լրագրութեան մէջ տեսնուած կարեւոր յօդուածներու վրայ դիտողութիւններ:

Ը. Գիտական նորութիւններ:

Մասնաւոր կերպով կը յայտարարենք մեր ընթերցողաց որ Յունուարէն սկսեալ «Բանասէր» վերոյիշեալ ծրագրով ԱՄՍԻԹԵՐԹԻ պիտի վերածուի, իւրաքանչիւր անգամ տալով 32 էջ: Եւ

ՄԱԿԵԻ ԲԱՐՁ. Կ. Ի ԿՈՉԸ (Արտասպուստ Բեֆօրմիլից)

Մակեդոնա.— Որքինեան կազմակերպութիւնը, որի ազնիւ նպատակն է Ռիլի և Ռօտօպների միւս կողմը գտնվող գերան օգնել, այսօր այս կոչն է ուղղում բուլղար ժողովրդին և հրաւիրում նրան օգնելու այն երկրին, որը հինգ հարիւր տարիէ ի վեր հեծում է ամենադաժան բռնութեան տակ:

Ամէնքիդ էլ քաջ յայտնի է որ Մակեդոնիայի և Օդրինի վիճակը այլ եւս անհանդուրժելի է:

Ամենօրեայ հալածանք, բռնաբարութիւն, հրդեհ, սպանութիւն, ոչնչացումը այն ամենի, ինչ որ արթուն և երիտասարդ է:

ինչպէս որ կանխաւ խոստացեր էինք, յիշանաւորի ինչ ինչ յօդուածները պատկերազարդ պիտի հրատարակենք:

Թերթին գինն առ այժմ նոյնը կը մնայ, այսինքն՝ տարեկան 12 ֆր. — 6 ուրբի. բայց եթէ բաժանորդներու բազմութիւնն զմեզ խրախուսէ այն ատեն կը խոստանանք 10 ֆրանքի իջեցնել:

Կը խնդրենք խոնարհաբար մեր պատուական պաշտօնակիցներէն՝ որ բարեհաճին իրենց թերթին մէջ հրատարակել մեր ներկայ ծանուցումը:

Մեր հասցէն է՝ Պատմական
112 Պո. Ռօշէշուարդ.
Բարիզ (18)

Ն Ա Մ Ա Կ Ա Տ Ո Ւ Փ

Գերմանիա, Գաւառացի. — Ազգակցքէք և երկրորդ հատորը. դուք մի թակարդի մէջ էք ինկած, կուզեն ձեզ գործիք դարձնել աղտոտ փառասիրութեան մը. Վերջը մանրամասնութիւնները կը պարզենք ձեզ. Հանգիստ եղէք, ժամանակին երկու հատորն ալ ձեզ կը վերադարձնենք:

— Շուժա, Բազ. — Ձեր ուղած թիւերը չը չրկեցինք, որովհետեւ շատ քիչ մնացած են. Իսկ ձեր զրկած 20 սանդիմի մարքան ձեր նամակի համար տուգանք վճարեցինք, որովհետեւ փոխանակ 15 սանդ. ի օ սանդ. մարքայով զրկած էիք ձեր նամակը:

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Վանայ առաջնորդարանի և տեղական կառավարութեան արտօնութեամբ բացուած կիրակնօրեայ դպրոցը բաւական օգտակար կը լայ եղեր, շնորհիւ Յարութիւն սարկաւազ կամսարականի:

— Սահակ եպիսկոպոսի հրաւերով Սսի կաթողիկոսական փոխանորդ Կիրակոս եպիսկոպոսը Առանայ եկեր է. Կը կարծուի թէ՛ արդէն ձեռնարկած են իրենց պաշտօնի գործադրութեան:

— Պարուի մէջ մօտերս մեռած Մարգար Եարամիշեանի եղբայրը 3000 րուպի նուիրեր է զանազան եկեղեցիներու և վարժարանաց:

— Սուլթանի հրամանով Զիլէի Մեսրոպեան վարժարանը պիտի վերաշինուի:

— Նիւ-Եօքի մէջ ապրող հայ տիկիները 5 անգլիական ոսկի զրկեր են Վարագ որը մը պահելու համար:

— Պօլսոյ աղգային հիւանդանոցի հոգաբարձութեան տեղեկագրին համաձայն հիւանդանոցը 1 միլիոն 365, հազար 779 զրշ. մուտքունեցեր է և 1 միլիոն 270 հազար 830 զրշ. ելք:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ա

Պօլսէն անգլիական թայմզ թերթին կը հազորդեն որ Եւրոպական դեսպանները թուրքիոյ վիճակը շատ դէշ կը գտնան և մտադիր են դեսպանական ժողով մը կազմել:

— Թուրքիոյ և Անգլիոյ յարաբերութիւններն ալ լարուած կերելին: Պատճառը Պարսից ծոցին վրայ գտնուած Գոիէթնէ, չոր թուրքերը գրաւել կուզեն, Անգլիան ալ կը հակառակի:

— Լօրատօի խնդրը դեռ կարգադրուած չէ: Թուրքիա գումարը կը պակսեցնէ, իսկ Ֆրանսական կառավարութիւնը չի համաձայնեցր:

— Ամերիկացի միսիօնարուհի օրիորդ Սթօն դեռ գտնուած չէ: Եւրոպական թերթերու մէջ լուր կը պտտի թէ Սթօնը առեւանգողները թուրք աւազակները չեն այլ Մակ. յեղափոխականներ, ասոնց զլխաւորը իբր թէ 25000 ոսկի պահանջած է Սթօնը ազատ արձակելու համար:

— Ձը նայելով որ Էրզրումի վալի Ռէուֆ փաշան երկար տարիներով մեծ համակրանք կը վայելէր իր նահանգի ժողովրդին մէջ, Սուլթանը պաշտօնանկըրած է զայն:

Պաշտօնանկութեան պատճառը կը համարուի Ռէուֆ փաշային ըրած դիտողութիւնները կառավարութեան բռնած գիրքին մասին իր նահանգին վերաբերմամբ:

Սուլթանը Գերմանական դեսպանը տեսակցութեան մը հըրաւիրեր է սեպտեմբեր 18ին:

— Հոկտեմբեր 10 Բօվէթի շրջակաները քաղսքին Շէյխը նէտմէտ կոչուած ցեղի մէջ ընդհարում մը տեղի ունեցեր է: Կորստը չնչին է. Անգլիական Հնդկաստանէն քանի մեծ թնթանօթներ զրկուեր են Բօվէթի:

— Սուլթանը յետաձգեր է Բուվէթ զօրքեր զրկելու որոշումը: Եթէ անգլիացիները Բօվէթը գրաւեն, այն ժամանակ սուսներն ալ Պարսից ծոցի մօտ տեղ մը պիտի գրաւեն:

«Թայմզ» կը հազորդէ թէ՛ հաւանական է որ Անգլիոյ Բօվէթը իր հովանաւորութեան տակ առնէ և կաւելցնէ ժամանակէ որ Անգլիա ցոյց տայ թէ՛ ինք տրամադիր չէ ընդունիլ թուրքիոյ

աղգեցութիւնը Պարսից ծոցին մօտերը:

— Ֆրանսական կառավարութիւնը թուրքիայէ կը պահանջէ անմիջապէս վճարել 345,000 լիրա Լօրանտօի պահանջի փոխարէն:

Չ Ի Ն Ա Ս Տ Ա Ն

Իէքիւնը կը պատրաստեն կայսրը ընդունելու համար: Ատոր մասին արդէն կայսերական հրովարտակը արուած է:

Կայսրուհին քիչ մը պիտի ուշանայ վերադառնալ, որովհետեւ կը կատարուի թէ նորոպացիները իրեն դէմ թակարդ մը լարած ըլլան:

— Գերմանական կառավարութիւնը Զինատանի հետ կանոնաւոր յարաբերութիւնները վերանորոգելէ վերջ, Զին կառավարութեան յայտարարած է որ Իէքիւնէն բերուած աստղաբաշխական գործիքները կը գրուին շինական կառավարութեան տրամադրութեան տակ:

Թ Ր Ա Ն Ս Վ Ա Լ

Իթալիա քով անգլիացիներու և յօգէրներու միջեւ մեծ ճակատամարտ մը տեղի ունեցեր է, կրտսն թէ պօէրները շատ մեծ կորուստ ունեցեր են, սակայն դեռ որոշ թիւ մը չըկայ մէջտեղ: Այդ ճակատամարտին ներկայ եղեր են բոլոր պօէր զլխաւոր զօրավարները:

— Անգլիոյ մէջ ժողովուրդը հետզհետէ ասելի կը ձանձրանայ այս անյաղող պատերազմէն, Գոգոհութեան ձայները ամէն կողմ կը շատնան. մանաւանդ որ Թըրանսվալէն անգլիացիներ տեղեկիութիւն կուտան որ պօէրները ամենեւին յոգնած չեն երեւիր և տրամադիր են նոյն եռանդով պատերազմը շարունակելու:

Ա Մ Ե Ր Ի Կ Ա

Լուր տարածուած է որ անիշխանականուհի Էմմա Կօլտման ռուսական լրատուահի է:

Կօլտմանի ձեռքակալուած միջոցին իրեն յայտնած են այդ օրիորդը սաստիկ յուզուեր է և յայտարարեր է որ այդ սուտ լուրերը կը յերկուրեն իր վարկը կորստելու համար:

Նիւ-Եօքի գաղտնի օստիկանութիւնը հիմայ ճիգեր կը թափէ այդ գաղտնիքը պարզելու համար:

Էմմա Կօլտման ազատ արձակուած է և մտադիր է շարք մը դասախօսութիւններ կարգաւ անիշխանականութեան փրկիստիպութեան մասին:


Կառավարութիւնը թոյլատրած է:

— Առհասարակ կառավարութիւնը մտադիր չէ արտակարգ միջոցներ ձեռք առնել անիշխանականներուն դէմ, ինչպէս քանի մը լրագիրներ կառավարկելին:

— Իօլա նահանգի ժողովուրդը մտադիր է բազմութիւ ստորագրութիւններով դիմել կառավարութեան որ Մակ-Գիւլին սպաննող Յոլիօսի դիակը հողի մէջ չը թաղուի և շարատուօրէ Ամերիկեան հողը, այլ ծովը նետուի:

ԹԱՏՐՈՆ ՍԱՆԹՐԱԼ

—(II)—



Հայ Դեր. խումբը առաջնորդութեամբ Ա. Պէնէլեյի վազը հինգ շաբթի դիշեր մեծաւ պատրաստութեամբ պիտի ներկայացնէ:

ԽԱՂԱՄՈՒԼ ԿԵՆՍԵ 30 ՏԱՐԻՆԵՐԸ

Բարոյալից թատերախաղ 6 արարուած:

ԵՐԳ ԵՒ ՊԱՐ

Ըստ խնդրանաց թատերասէր հասարակութեան ասկից յետոյ ամէն հինգշաբթի երեկոյ բարոյական սերահոներ պիտի ներկայացուին, զաւելչուով միասին:

Գինները սովորական և խիստ դրամատաշի:

ԱԶԳ

Բաղէշի կուսակալութեան պատկանեալ Յուրդափ գիւղէն Պէկօ Ասատուրեանի, հաստատակազմ չէկ պէխով ու յօնքերով, 6 ամիսէն ի վեր ուր լինելն անյայտ է զայն եթէ ճանաչողներ կան յանուն մարդասիրութեան թող իր այրի տիկին մայրը միթաթել հաճին, անոր ուր գտնուիլը խմբագրութեանս հազորդելով:

ԵՒՐՈՊԱՅԻ ՀԱՅ ՈՒՍ. ՄԻՈՒԹԻՆ

Եւրոպայի Հայ. Ուս. Միութեան նամակ ուղարկելու եւ առհասարակ ամէն տեսակ դիմում ընելու համար պէտք է գրիմել հետեւեալ հասցէով
Ինիոն sk Զէդիսիսիս Արմ.
Լ'Էօրոք Վիլ քը Լ'Էօլ քը Շիւի 2

Սուխ Ժընկ
Կարգադիր Յակոբ Կարապետ

Отговорникъ:
Мурадъ-Ераносянъ
Печ. Взаимность — Варна